ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1964 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Վ. Ա. Դաբրիելյան

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՎԱՔԸ

(Կյանքի և ստեղծագործության վերջին շրջանը)

Դարավերջի տասնամյակում և մեր դարի սկզբում ապրեց ու ստեղծագործեց արևմտահայ բանաստեղծների մի հիանալի խումբ, իսկական տաղանդների մի հույլ՝ Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց, Սիամանթո, Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան։ Ռուբեն Որբերյանը տարիքով ամենից ավագն էր այս խմբում։

Կյանքի խառը ժամանակաշրջան ապրեց բանաստեղծը, մեծ դեպքերի ու փոփոխությունների ականատես եղավ, հետևաբար և՛ հոռետես ու թախծոտ, և՛ մեղմ վշտի ու կարոտի, և՛ բողոքի ու ըմբոստացման երգերի լարեր հընչեցրեց։ Նա աշխարհայացքային հակասություններ ապրեց, բայց մնաց որպես առաջադեմ ու լավատես ստեղծագործող։ Որբերյանը հեղինակ է պոեմի ու բանաստեղծության, վիպակի ու նովելի, մեմուարների ու գրախոսությունների, հրապարակախոսական հոդվածների ու թարգմանությունների։

Ռուբեն Որբերյանը ծնվել է Արևմտահայաստանի Մալաթիայում, 1874 թ., ավարտել է Խարբերդի Եփրատ կոլեջը, ուսուցչությամբ ու առևտրով զբաղվել Պոլսում, Իզմիրում, ապա Աֆրիկայի Ջիբուդի քաղաքում ու Փարիզում։ Բանաստեղծ-քաղաքացին տարբեր վայրերում ականատես եղավ հայ կյանքի ու համաշխարհային մեծ ողբերգությունների՝ կոտորածների ու պատերազմների, սոցիալական վերափոխումներ տեսավ, ու նրա աշխարհայացքը դրանց համապատասխանաբար փոփոխվեց։

1920 թ. նա Ջիբուդիից Փարիզ մեկնեց, ուր ապրեց մինչև իր կյանքի վերջը՝ 1931 թ. հունվարը։ Նրա կյանքի ու ստեղծագործության այդ տասնամյակին է նվիրված այս հոդվածը։

Տասը տարիների կյանքը Փարիզում, հիվանդության պատճառով գրական-հասարակական գործունեության տեսակետից, մեծ աշխուժությամբ չի անցել։ Սակայն հասարակական-գրական բուռն կյանքով ապրած բանաստեղծը չէր կարող լրիվ մեկուսանալ, մանավանդ Փարիզում, ուր այդ տարիներին հայության թիվը մեծ էր։ Նա մասնակցում է գրական-հասարակական կյանքին, բարեգործական ընկերությունների աշխատանքներին, Փարիզում հիմնում է Առաքինության մրցանակների տոնը։

Աշխարհայացքային նրա հակասությունները բխում էին գլխավորապես կյանքից կտրված և քաղաքական այս կամ այն հոսանքին ու գաղափարներին միայն հեռակա ծանոթ լինելուց։ Բայց նա ունեցավ սեփական աշխարհայացք, որը, սակայն, որոշ կողմերով համընկնում էր իշխող առանձին տե-

սակետներին։ Կյանքի վերջին տասնամյակում Որբերյանի աշխարհայացքի մեջ որոշակի պարզություն մտավ։

20-ական թվականների երկրորդ կեսում, արդեն Խորհրդային Հայաստանին հեռվից ծանոթ Որբերյանն, այն համարում է միակ հայրենիքը, որ կարող է Մայր կոչվել, և հանդում այն հետևության, որ հայ ժողովուրդը պետք է ընթանա սոցիալիստական հասարակարգ կառուցելու ճամփով։

Որբերյանը դառնում է Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի և նրա առավելությունների համոզված պաշտպաններից մեկն արտասահմանում։ Խորհրդային Հայաստանի հասցեին դաշնակ ավանտյուրիստների վայրահաչ հարձակումների պայմաններում, Որբերյանը ճշտորեն և համարձակությամբ է պաշտպանում Խորհրդային Հայաստանի շահերը։ Նա խոր համոզումով (մի խումբ մտավորականների հետ միասին) բողոքի ձայն է բարձրացնում Խորհրդային Հայաստանի հասցեին լուտանքներ թափող դաշնակցական գործիչ Ա. Ահարոնյանի դեմ։

Հայտնի է, որ 1926 թ. Փարիզի «Ապագա» շաբաթաթերթում տպագրվում է «Բողոք» վերնագրով մի հայտարարություն, որի տակ ստորագրել էին փարիզաբնակ հայ գրողներ ու մտավորականներ՝ Շիրվանզադեն, Ա. Չոպանյանը, Տ. Կամսարականը, Ռ. Որբերյանը, Լ. Բաշալյանը, Վ. Մալեզյանը և ուրիշներ (թվով 14 հոգի)։ Հայտարարությունն ուղղված էր դաշնակցական գործիչ Ա. Ահարոնյանի մի հոդվածի դեմ, որը լի էր Խորհրդային Հայաստանի ղեկավարների և Խորհրդային Հայաստանի հասցեին ուղղված հայհոյանքներով։

Ճշմարտությունը և հայրենիքը սիրող մտավորականները չէին կարող լռությամբ անցնել և հանդես եկան մամուլում։ «Բողոքը» «Ապագայից» արտատպվեց արտասահմանի հայ առաջավոր մամուլում և լայն արձագանք գտավ։ Նրա հեղինակները գրում են.

«Արտասահմանի գործիչներու որոշ խումբ մը ատենե մ'իվեր կը ձգտի մամուլի ու բանախոսությանց միջոցով ժողովուրդը համոզել թե Խորհրդային Հայաստանի մեջ կատարվող վերաշինական ճիգերու մասին ըսվածները հերյուրածո են, թե Հայաստան մը գոյություն իսկ չունի այսօր, թե եղածը գերի երկիր մրն է.... և այլն։ Այդ կուսակցամոլ և անձնամոլ գործիչներեն մին (Ա. Ահարոնյանը—Վ. Գ.) վերջերս այս ոգով մղված պայքարը իր գերագույն չափազանցության հասցուց... Ստորագրյալներս, որ մեծ մասամբ չենք պատկանիր որևէ կուսակցության կամ կը պատկանինք կուսակցության մը, որուն ծրագիրը որոշ կետերու մեջ կը տարբերվի Հայաստանի ղեկավարներուն կուսակցության ծրագրեն, ճշմարտությունն այնքան խորապես կը սիրենք, որքան մեր ազգը։ Մենք պարտք կը համարենք հանուն հայ մտավորականության, բողոքել այս ազգավնաս ընթացքին դեմ, որ կը կոխոտե ճշմարտությունը, կը զրպարտե ու կանարգե Հայաստանի վարիչներն... ու անոնց մոտիկ ու հեռավոր բոլոր աջակիցներն ու համակիրները»[1]։

Այնուհետև նրանք դատապարտում են այդ արարքը նաև նրա համար, որ արտասահմանի հայության մեջ «վհատություն ու լքում կը ջանա առաջ բերել», որովհետև «մեզ համար անհերքելի իրողություն մրն է, որ Հայաստան մը

1 «Ապագա», Փարիզ, 1926, փետրվարի 13։

գոյություն ունի այսօր։ Մենք համոզված ենք, որ ան իր գոյությունը կրնա պահպանել ու զարգացնել միայն Խորհրդային Միության հետ դաշնակցած»[2]։

«Բողոքի» հեղինակների, նրանց թվում նաև Որբերյանի համար «հրճվեցուցիչ ու սրտապնդիչ ճշմարտություն մրն է» Հայաստանի շինարարական ու մտավոր նոր վերելքը։ Նրանք դատապարտում են դաշնակցականի այդ պրովոկացիան՝ այն համարելով «մեր ազգին բարձրագույն շահերուն վնասող անհանդուրժելի դայթակղություն մը»։

Միանգամայն պարզ են հոդվածի հեղինակների քաղաքական համոզումները, սերն ու հավատը իրենց Մայր Հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հանդեպ։ Միանալով նրանց Որբերյանը հանդես է բերում իր հավատն ու համոզումը խորհրդային կարգերի նկատմամբ։ Դա անցողիկ բնույթ չուներ։ Հետագայում՝ 1928 թ. իր մի հոդվածում նա կրկին ամբողջ սրտով պաշտպանում է իր այդ համոզումները։

Խորհրդային Հայաստանի 8-րդ տարեդարձի առթիվ Փարիզի «Երևան» թերթը մի շարք մտավորականների հրավիրում է իրենց կարծիքները հայտնել Խորհրդային Հայաստանի մասին։ Այլոց շարքում «Երևանի» հարցարանին պատասխանում է նաև Ռ. Որբերյանը։

Այս հոդվածը ամենից ավելի է բնորոշում Որբերյանի հայացքներն այդ ժամանակի ու գալիք օրերի, հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի մասին։ Որբերյանը գրում է.

«Հաճած եք զիս ալ հրավիրել, որ կարծիքս բանաձևեմ «այն նվաճումներու մասին, որոնք կատարված են Խ. Հայաստանին մեջ այս ութը տարիներու ընթացքին»։ Գրականության կամ բանաստեղծության մարզերուն մեջ կը փափաքեի մոտեն հետևած ըլլալ այն սքանչելի վերելքին, զոր ձեր թերթին սյունակներուն մեջ քանի անգամներ կը շողացնեք։ Կը ցավիմ որ արտասահմանի շատ հայերու պես անծանոթ մնացած եմ այդ շարժումին, կարող չըլլալով վարժվիլ նոր ուղղագրության։ Կարելի է նոր սերունդ մը մերինեն ավելի բարեբաղդ՝ խառնվի նոր խանդավառ թռիչներու։ Գալով «նվաճումներուն» անոնք երկուքի կը բաժնվին։ Նյութական և բարոյական։ Համայնավարական մաքուր սկզբունքներու կիրառումը, պատմության մեջ աննախընթաց այդ փորձը՝ բարեբար արդյունքներ տվավ մեր հայրենյաց համար և անխառն հիացումով է որ կը դիտեմ շինարարական բազմաթիվ ձեռնարկումներու իրականացումը Ս. Խ. Հ. Մ–ի եղբայրական հզոր ու անվերապահ աջակցությամբ։ Նույն խանդաղատ հիացումը ունիմ նաև ազգամիջյան խաղաղության համար, զոր կը դավանիմ Խ. Հայաստանի վարիչներուն գերագույն նվաճումը և որ դրախտի վերածել սկսավ փոքր ազգերու այն խառնարանը, որ Կովկաս կը կոչվի։ Իսկ համամարդկային եղբայրակցության սկզբունքներու դավանանքը նոր բան մը չէր մեր ցեղին համար։ Ավանդական, գրեթե ճակատագրական է հայ հոգիին խոյանքը դեպի գեղեցիկ, հեռավոր ու շատ անգամ անիրականանալի իտեալներ։

Միակ մտածումը, որ կը տխրեցնե զիս, սա է, թե մեզի չի տրվեցավ մասնակից ըլլալ վերաշինության այդ խելահեղ ճիգերուն։ Կաթիլ մըն ալ մենք չի խառնեցինք մեր եղբայրների քրտինքին...»[3]։

Ակնառու է, որ այս փոքրիկ հոդվածում ճշտորեն է ներկայացված մեր

2 Նույն տեղում (ընդգծումները մերն են—Վ. Գ.)։

3 «Երևան», Փարիզ, 1928, դեկտեմբերի 9 (ընդգծումները մերն են—Վ. Գ.)։

ժողովրդի և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ նրա բռնած ճիշտ ուղին ու ժողովրդի հավերժության գաղափարը։

Իր մի հուշում Որբերյանը խոսելով Խորհրդային հայրենիքի մասին, վերջում ավելացնում է. «...Հոս բանաստեղծը մեկ կողմ կը դնե այլևս իր քնարը, նայվածքը դարձնելու համար հեռավոր հայրենիքը, որ կվերածնի այսօր։ Կենսունակ և առողջ սերունդ մը կը դեզերի Մայր, տարագրության ճամբաներուն վրա։ Բաց գիրկդ, Մայր, քու սիրազեղ գիրկընդխառնումիդ և անուշ համբուրիդ կարոտով, ալ բավ մխեցին ու այրեցան մեր հոգիներ... Սրտերը վեր և հառաջ դեպի հայրենիք, իմ հոգիի ազնիվ ընկերներ»[4]։

1926 թվակիր այս տողերը որոշակիորեն ցույց են տալիս, որ Որբերյանը հայերի համահավաքի, հայրենիք դառնալու կոչ է անում սփյուռքահայ իր բախտակիցներին։

* * *

Հայտնի է, որ Որբերյանի վերջին գիրքը՝ «Ովասիսը» լույս է տեսել 1920 թ.։ Այնուհետև, կյանքի վերջին տասնամյակի նրա ստեղծագործության մասին քիչ բան է հայտնի։ Ժամանակի մամուլում պրպտումներից և Որբերյանի հարազատների հետ նամակագրությունից հետո մեզ հայտնի դարձան նրա մի շարք գործեր, որոնց մեջ՝ մոտ երեք տասնյակ բանաստեղծություններ (մի մասը անտիպ)։ Այդ բանաստեղծություններն, անշուշտ, այն ամբողջությունը չեն, որ դուրս են եկել նրա գրչի տակից, բայց դրանց ուսումնասիրությունը բերում է որոշ եզրակացությունների։ Հայրենասիրության, հայրենակարոտության (պանդխտության) ու հայրենիքի ազատության թեմայով Որբերյանի վերջին շրջանի բանաստեղծություններին ավելանում են օտար երկրներում սփռված հայության ճակատագրի, օտար ձուլումից խուսափելու, հայրենիք՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու հարցերը։ Գաղափարական տեսակետից՝ նրա իդեալի անորոշությունը կոնկրետություն է ստանում և մտքի թափառումները իջնում են իրական հողի վրա։ Հոռետեսությունը կամաց-կամաց աղոտանում է, հավատը՝ թանձրանում, թեև երբեմն-երբեմն այն տատանման շեշտեր է ընդունում։ Որբերյանն իր հայացքը վերջնականապես դարձնում է դեպի հայրենի բնաշխարհը, դեպի Արագած։

Այդ տրամադրության և գաղափարի ծնունդ է «Կարոտագին այց» բանաստեղծությունը[5], որ կրում է «Պատասխան Լոնկֆելոյին» ենթավերնագիրը։ Դա հույզերի ու մտքերի մի ամփոփում է, որ բացահայտում է հեղինակի մտորումները։ Երանի տալով նրանց, որ իրենց տունն ու օջախն ունեն, որ հայրենակարոտ չեն, որոնց հոգեկան անդորրը հիշատակների վերականգնումն է լոկ, բանաստեղծն իր՝ տարագիր հայի մորմոքն է հայտնում, տենչում փայփայված երազների իրականացման օրը։

Հյուղակ մը կա Արագածի լանջին վրան,
Այնտեղ օճախ մը, քովն աթոռ մը թափուր,
Դուռը բաց է և կիսափակ պատուհան,
Ուր կսպասե ալևոր Մայր Հայաստան,
Իր տարագիր զավակներուն հեռավոր։

---

4 Թ ե ո դ ի կ, Ամենուն տարեցույցը, 1927, էջ 187։

5 «Հայաստանի կոչնակ», 1928, էջ 817։

Եվ շատ բնական է, որ երկար տանջանքներ տեսած, բայց ազատ Հայրենիքի կարոտ պանդուխտ հայը մի պահ չի հավատում, որ կարող է ազատ Հայրենիք ունենալ։ Ու թեև սրտի խորքում հավատացած է, որ այն գոյություն ունի, բայց էլի հարցնում է, հարցնում է, որ հաստատի իր իմացածը.

Մո՞տ է առտուն, ըսե, ով Մայր կաթոգին,
Կարմիր աստղեն եկա՞վ հույսի մի նշույլ,
Բուրաստանիդ մեջ վարդենիք կը ծաղկի՞ն,
...Անհետացա՞ն մղձավանջներն մեզ մաշող,
Բոսորին տակ պայծառաշող երկինքին...

Երգչին հայտնի է այս հարցի պատասխանը։ Նա գիտե նաև իր անելիքը և Մայր Հայրենիքին իր դարձի խոսքն է ուղղում, հաստատ համոզումով, թե՝

Կարոտակեզ զավակդ քեզ պիտի դա,
Չի մարեցավ դեռ հոգվույն խորն հույսի հուր
Ու կը հավտա գարուններուն ապագա....

Բանաստեղծը պահել է իր հոգու խորքում հույսի հուրը և հավատում է ապագա գարուններին։ Ավելին, նա ապագա գարուններին ոչ թե մշուշոտ ու եթերային երազներով է հավատում, այլ՝

...Հայ երգիչին բանտն ու շղթան,
Երազի պես կանհետանան,
Նոր հմայքով մ'երանավետ։
Ան չսպասեր ստվեր, ոգի,
Հոս են երկինք, հոս իրական
Նոր կյանք մ'ուժեղ ու տիրական
Նոր բարձունքի մը կը հանգի...

Երգչի երազն իրականություն է դարձել, և դա Արագածի լանջին փռված իր Հայրենիքն է, որն իր գիրկն է կանչում աշխարհով մեկ սփռված տարագիր հայությանը։

Բանաստեղծությունն արժեքավորվում է հենց այն բանով, որ ճիշտ է պատասխանում պատմականորեն մի շատ կարևոր հարցի՝ հայության համահավաքին։

Բանաստեղծության առողջ գաղափարը պարուրված է ռիթմի ու սահունության, պատկերավոր լեզվի միահյուս թաղանթով։ Վերքը կա, ցավը կա, հայրենակարոտությունը կա. սա այլևս հարցադրում չէ իր համար՝ ուղղված աշխարհին, սա իրականություն է և բանաստեղծն իր կարծիքն ունի այդ իրականության մասին։ Այդ կարծիքը նրա տարբեր բանաստեղծությունների մեջ տարբեր նրբերանգներով է արտահայտվում։

Այսպես, «Նոր շարական» բանաստեղծության մեջ դիմելով Նազովրեցուն, Որբերյանը նրա անլուր չարչարանքների հետ է համեմատում հայության կրած տառապանքը և հին ու նոր տարիների գնալ-գալու մասին խոհով հյուսում մի խորիմաստ «շարական», որը ոչ թե Աստծո ու Քրիստոսի

մասին է, ոչ թե սրբերի մասին, այլ հայ ժողովրդի տառապանքի մասին, այն հայի, որի համար՝

«Տեր Ողորմեաս» եղավ անհուն մի բողոք,
Ու շարականս՝ անեծքի սև փրփուր...[6]

Բանաստեղծությունը քննադատական խոսք է՝ ուղղված եկեղեցու դեմ։ Նրանում «տեր ողորմեան» մի բողոք է դառնում։ Չնայած «սև փրփուրի» մռայլ տրամադրությանը, և չնայած բանաստեղծության առաջին տխուր տողերին, բանաստեղծությունը ավարտվում է հաստատ ցանկությամբ ու հավատով, որ՝

Մեր երգն հովերն առին, տարին,
Կոչին թող դա նոր պատասխան.
«—Տենչերու հետ հույսին նման,
Ավետեցեք Հայաստանին,
Հին վիշտերու դնաց տարին,
Արդարության եկավ տարին...»։

Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը այն է, թե բավական են աղոթաձև խնդրանքները, թող հստակ կերպարանք ստանա իղձը, երազանքը։

«Նոր շարական» երգն աչքի է ընկնում բանաստեղծական հնչեղությամբ, սահունությամբ ու ազատ ոճով։ Այդ յամբական երկանդամ ութվանկանի տողերի, ուժեղ հանգերի, կրկնությունների ու պարզ պատկերավորության արդյունքն է։

Որ կյանքին բաց աչքերով պետք է նայել, որ կյանքը այլևս պատրանք չէ, մեկ այլ ձևով է արտահայտել բանաստեղծը «Արուսյակիս» բանաստեղծության մեջ[7]։ Իր դստեր՝ Արուսյակի ծննդյան տոնին Որբերյանը Մյուսեի մի գիրքը նվիրելով, շապիկի վրա մի բանաստեղծություն է գրում։ Նրանում կյանքի պայծառ ապագայի հավատով ու ջերմությամբ լցված բանաստեղծն իր դստերը կտակում է այն վաղը, որը, հաստատ համոզումով, լավն է լինելու, գեղեցիկ։ Այդ լավը ցնորք չէ, մշուշ չէ. «Վաղը պատրանք մը չէ, Մյուսե»։ Բանաստեղծությունն աչքի է ընկնում իր կառուցվածքով. յուրաքանչյուր տան վերջին տողը կրկնվում է որպես նոր տան առաջին տող և դրա հետևանքով բանաստեղծությունը կարդացվում է մի շնչով, աշխույժ։ Այդ աշխուժությունը թեթև է, անհոգ, և կարծես բխում է այն ուրախությունից, որ վաղն, իսկապես, լավն է լինելու։

Բանաստեղծի աշխարհահորիզոնի մի անբաժան մասն է հայրենակարոտությունը և չընկճվելու, մինչև վերջ պայքարելու, օտարին դիմագրավելու մտայնությունը։ Այստեղ է, որ Որբերյանը իր կյանքով ու ստեղծագործությամբ դառնում է մի լավագույն օրինակ սփյուռքահայության համար։

Այլոց թվում Որբերյանն էլ է տեսնում սփյուռքահայության «մաշվելը տարագրության ճամփաներուն վրա»։ Տեսնում ու ցավում է ոչ պակաս, քան

6 «Հայաստանի կոչնակ», 1928, էջ 46։
7 Թ ե ո դ ի կ, Ամենուն տարեցույց, 1927, էջ 473։

ուրիշները։ Բայց նա հուսալքման շեշտերով չի մոտենում հարցին, այլ հայությունը կորցնելու վախվորիկ տրամադրությանը իբրև դեղատոմս հրամցնում է իր՝ հայրենիքի նկատմամբ մեծ սիրով ու հավատով լցված ստեղծագործությունը։ Նրա կարծիքով, ամենից առաջ պետք է այնպես անել, որ հուսալքումը չլինի սփյուռքահայի ուղեկիցը, այլ՝ հավատը։ Կյանքի դժվար ճամփաներին, ինչ էլ որ լինի, այդ ճամփաների վրա դեռևս դեգերում է «առողջ սերունդ մը», որ կոչված է հայ կյանքը շարունակելու։ Պետք է անմար պահել «հավատի բոցը», մինչև հայրենիք վերադառնալու քաղցր վայրկյանը։ Իսկ դա ուշ չի լինի, որովհետև հայ ժողովուրդն ունի արդեն իր ազատ հայրենիքը Արագածի լանջերին, Խորհրդային Հայաստանը։

Եթե Որբերյանը չի ուզում տեսնել սփյուռքահայության հուսալքությունը, ապա այդ չի նշանակում, որ նա չի տեսնում այն դառն իրողությունը, որ ի վերջո Եվրոպան կլանելու է նրանց. քանի ուշ չէ, պետք է բռնել տունդարձի ճանապարհը, դեպի Խորհրդային Հայաստան, որը «կը վերածաղկի այսօր»։

Որբերյանը տեսնում էր սփյուռքահայության հետագա ճակատագիրը և ճշմարիտ ճանապարհը նրա հետագա կյանքի։ Դրան են նվիրված Որբերյանի կյանքն ու ստեղծագործությունը՝ վերջին տասնամյակում, մասնավորապես նրա «Համրիչ»[8], «Ս. Աստվածածին»[9], «Հին տնակս»[10], «Շանթի որդին ըլլալ»[11], «Հոպարին դասը»[12]. «Անդրանիկ», «Հայրենիքի խնձորներ», «Մարիանիս»[13] և այլ բանաստեղծություններ։

Երկար է թափառել բանաստեղծը, արևներ են այրել նրա ճակատը, ամեն տեղ նոր տուն է շինել, ու, որքան էլ լավն են եղել այդ վայրն ու տունը, դրանք չեն հմայել իրեն, նրան իր հին տնակն է կանչում՝ Մասիսի ստորոտում, Տավրոսին հանդիման։ Ու բանաստեղծը անկեղծորեն իր սրտի խոսքն է հղում հին, հայրենի տնակին։

Բուրաստաններ ամեն տեղ կան
Դեղափթիթ ծաղիկներով,
Նույն աստղերը, նույն լուսնկան,
Նույն թռիչն ունեն զեփյուռն ու ծով։
Լոկ դուն չիկաս սարերուն վրա։
Ամայացած տունս հայրենի,
Քեզի համար հոգին կուլա,
Ղարիպին սիրտն ալ կ'արյունի...

Պանդխտության թեման ձուլված է Որբերյանի հայրենակարոտության թեմային, նույնանում է նրա հետ։ Իրոք, պանդխտի սիրտը արյունով է լցված, հայրենիքի մաշող կարոտի արյունով։ Բայց որտեղ էլ որ լինի հայը, պետք է վառ պահի իր հավատը, որովհետև «վաղանցուկ են վիշտն ու պատրանքն աշխարհին», որովհետև, ըստ Որբերյանի, հայի իդեալ-երազը արդեն վերա-

8 «Արագած», Փարիզ, 1926, հունվար։
9 «Հայաստանի կոչնակ», 1931, էջ 12։
10 «Ընդարձակ տարեցույց Ս. Փրկիչի հիվանդանոցի». 1930, էջ 269։
11 Ձեռագիր՝ ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան։
12 «Յուշարար», Նյու-Յորք, 1962, ապրիլի 15։
13 Սրանք ձեռագիր են և գտնվում են մեզ մոտ։

ցական չէ, այլ կոնկրետ, մարմին առած Խորհրդային Հայաստան—Հայրենիքը։ Դրա կարոտն է մաշում նրան լուսավորյալ Եվրոպայում, և նրա մեջ Կովկասից բերված հասարակ խնձորներն էլ արթնացնում են կարոտի փոթորիկը և՝

Բանաստեղծին սրտին համար տրոփուն
Արշալույս մը բերին անհուն ու անծիր....
...Կովկասեն նոր հասեր էին, ըսիր դուն։
—Խորհրդային ու քաղցրահամ Հույսին պես...
(«Հայաստանի խնձորներ», ձեռագիր)։

Բանաստեղծի համար թանկագին են այդ խնձորները, որովհետև՝

Հայուն արևն է նկարեր իրենց դույն,
Էջմիածնի ու Սևանի խնկաբույր
Հովն է հպեր անոնց աղվոր այտերուն,
Բանաստեղծը ճակատը մակ, սլացող,
Կը սևեռի իր հույսերուն անցյալին,
Արևելքեն կարմիր շողեր կը փայլեն....
—Մղձավանջը ու մռայլը ղաղրին թող,
Մայր, զավակներդ կարոտովդ կը մաշին...
...Եվ աչքերես հուշիկ-հուշիկ կը թափեն
Խնձորներուդ կարմիրին վրա
Ուր նոր երազ մը կերևրա,
Պանդուխտներուն արցունքները իբրև ցող...

1926 թ. գրված այս տողերը որոշակիորեն բնութագրում են Որբերյանի հայացքները հայության հետագա ճակատագրի մասին։ Պանդուխտները ուրախության արցունքներով են դիտում «նոր երազը», որ պարզորոշ է՝

«Արևելքեն կարմիր շողեր կը փայլեն»...

Բանաստեղծի հաստատ հավատը զորավիգ է դառնում սփյուռքահայությանը։ Նա պատգամում է իր փոքրիկ բարեկամին («Հոբարին դասը»), երբեք չմոռանալ հորն ու Հայրենիքը, հային։

Սիրել հորն ու Հայրենիքը, սիրել կյանքն ու Հայրենիքի հերոսներին, այս է ուսուցանում Որբերյանը իր մի շարք բանաստեղծություններում։ Մի զողտրիկ ու խորիմաստ բանաստեղծություն է դրանցից մեկը, որ նվիրված է ազգային հերոս Անդրանիկին, նրա թաղման օրը։ Որբերյանը լավ է ըմբռնել հայրենասեր զորավարի էությունը, թե ինչի՞ համար էր նա պայքարում իր ամբողջ կյանքում, ինչի՞ համար նա հանգիստ չուներ։ Եվ որպեսզի այժմ զոնի հանգիստ հանգչի, պետք չէ նրան ինչ-որ կոթող, այլ՝

Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն
Բարեկամներ դաղաղին վրա նետեն թող
Հայաստանի ափ մը հող։

Բանաստեղծության մեջ սրտաբուխ գովերգում կա իսկական հերոսի հասցեին ու պատգամ իր ժողովրդին՝ նրա պես ապրել։

Որբերյանի այս գործերն ինքնանպատակ չեն։ Նա ստեղծագործում էր ներքին մղումով և պահանջ էր զգում իր իդեալը, գաղափարը հաղորդել բոլորին, ուզում էր օգնել իր ժողովրդին։ «Իտեալս» բանաստեղծության մեջ նա ասում է, որ չի ուզում լինել ոչ քանդակագործ, ոչ դերասան, ոչ հռետոր. ինքը ծնվել է բանաստեղծ, և դա նրան մղել է իր իդեալը «կյանքի բոցակեզ սլացքից» ներշնչված։ Եվ եթե ինքը մեռնի, իսկ երգերը կյանք ունենան, կսլանան սրտերիրտ, ու նորեն կապրի իր իդեալը.

Ժամանակը կը խամրե վարդ, հիշատակ,
Այլ սրտե սիրտ եթե երգերն իմ սլանան,
Պիտի հանդչիմ իմ մոռացված շիրիմին տակ,
Անոնց մեջ դուն պիտի ապրես հավիտյան...[14]։

Որբերյանի վերջին շրջանի բանաստեղծություններն էլ զգայուն ու մտածող սրտի արդասիք են և նախորդ շրջանի օրգանական շարունակությունը։ Միայն թե կյանքի նոր շրջանը կյանքի նկատմամբ նոր հայացքներ է ներդրել այդ բանաստեղծությունների մեջ։ Դրանք վկայում են, որ բանաստեղծը կանգնում է իր ժամանակի առաջավոր մտավորականների շարքում։ Որբերյանը ճիշտ ն առաջիններից է պատասխանում պատմական այն հարցին, թե ստար ափերում հայության ձուլման վտանգի միակ փրկությունը՝ հայ ոգին ամուր պահելու և Խորհրդային Հայրենիք վերադառնալու մեջ է։

«Բա՛ց գիրկդ, Մայր, քու սիրազեղ գիրկընդխառնումիդ և անուշ համբույրիդ կարոտով ալ բավ մխացին ու այրեցան մեր հոգիներ...»,—գրում էր Որբերյանը։

Մայր հայրենիքի գիրկը բաց է, և ջերմագին ընդունում է այսօր իր տարագիր զավակներին։ Սփյուռքահայերի բազմաթիվ քարավաններ վերջնական հանգրվան են գտնում Մայր Հայրենիքում։

В. А. Габриелян

РУБЕН ВОРБЕРЯН И ВСЕОБЩАЯ РЕПАТРИАЦИЯ АРМЯН

(Резюме)

Творчество талантливого западноармянского поэта Рубена Ворберяна проникнуто глубоким патриотизмом и гуманностью, которые по достоинству были оценены такими крупными художниками слова, как Ов. Туманян, Д. Варужан, Врт. Папазян и другие.

Данная статья посвящена рассмотрению литературно-общественной деятельности и мировоззрения Р. Ворберяна в последний период его жизни (1920—1931). Он в этот период приходит к выводу, что только Советская Армения может стать родиной всех армян, разбросанных по всем континентам мира.

Это исключительно передавая идея для 20-х годов, и Ворберян, по праву, считается одним из представителей социалистического возрождения армянской литературы.

[14] «Ընդարձակ տարեցույց Ս. փրկչի հիվանդանոցի», 1930, էջ 260։

Ворберян понял, что только Советская Армения может быть истинной родиной всего армянского народа.

Эта тема и доминирует в этот период в творчестве поэта-патриота («Яблоки родины», «Завстное посещение», «Новый псалом», «Протест», «Мое слово» и др.).

Велико значение творчество Ворберяна для армянской литературы в особенности своей тематикой (патриотизм, освобождение родины от турецких и других иноземных порабодителей, возврат на родину эмигрантов армян и т. д.).

Творчество Ворберяна для нас приобретает актуальное значение, так-как лишь сегодня осуществляются мечты поэта-патриота—репатриация армян.

Воспевая в своих многочисленных статьях и стихах молодую советскую республику, он призывает всех своих собратьев (сам он тогда жил во Франции) репатриироваться в Советскую Армению и принять активное участие в строительстве новой, свободной жизни.